

Կոմիտեի անդամների ուշադրությանը ներկայացվեց մանրամասն զեկույց Վրաստանում կրոնական փոքրամասնությունների նկատմամբ խտրականության մասին ([հասանելի է ՄԱԿ-ի մարդու իրավունքների Կոմիտեի էջում`](#)), ինչպես նաև Վրաստանի Հայ Առաքելական, Հռոմեա-կաթոլիկական, Լյութերական և Բապտիստական եկեղեցիների առաջնորդների նամակը` ուղղված Կոմիտեի նախագահին ([հասանելի է ՄԱԿ-ի մարդու իրավունքների Կոմիտեի էջում`](#)):

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի անդամները մտահոգված էին ներկայացված փաստերից: Կոմիտեի փոխնախագահ պարոն Յադ Բեն Աշուրը նշեց, որ ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ պետությունը չի կատարում կրոնական փոքրամասնությունների նկատմամբ խտրականությունը արմատախիլ անելու ուղղությամբ իր պարտականությունները ([սեղմեք տեսագրությունը դիտելու համար](#)): Պարոն Բեն Աշուրը Արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանիի կողմից գլխավորվող պատվիրակության առջև դրեց հարցեր, որոնք կապված են.

- Խորհրդային ժամանակաշրջանում կրոնական փոքրամասնություններից բռնագրավված ունեցվածքը վերադարձնելուն,
- Վրաստանի Ուղղափառ Եկեղեցու կողմից կրոնական փոքրամասնությունների ունեցվածքի յուրացման փաստերին և պետության կողմից աջակցությանը,
- Հարկազանձման ոլորտում կրոնական փոքրամասնությունների խտրականությանը,
- Կրոնական փոքրամասնությունների հասցեին վիրավորանքներին և դրանց խափանման գործում պետական մարմինների պասսիվությանը,
- Վրաստանի Ուղղափառ Եկեղեցու և Պետության միջև Սահմանադրական համաձայնությանը` որպես երկրում կրոնական փոքրամասնությունների նկատմամբ խտրականության աղբյուրի,
- Կրոնական կազմակերպություններին բյուջետային միջոցներ հատկացնելու հարցում

